# ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

## Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԽԱՉՎԵՐԱՑԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(15 սեպտեմբերի, 2013 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ,

Այսօր մեր Եկեղեցին տոնախմբում է Խաչվերացի տոնը, որը նվիրված է խաչի պանծացմանը, խաչի գաղափարի եւ խորհուրդի վերարծածմանը մեր մտածումների մեջ:

Մեր Եկեղեցին խաչին նվիրել է չորս տոն, որոնցից կարեւորագույնը, մեծագույնը ահա այսօր տոնախմբում ենք: Քրիստոնեությունը արտահայտող առավել բնութագրական մեկ այլ խորհրդանիշ դժվար թե հնարավոր լինի գտնել քրիստոնեական թե՛ մեր մատենագրության, թե՛ մեր ընկալումների եւ թե՛ խորհրդաբանության մեջ: Խաչն այն բացառիկ խորհրդանիշն է, որով արտահայտում ենք մեր պատկանելությունը եւ առհասարակ մեր վերաբերմունքը քրիստոնեության նկատմամբ: Եւ այսօր Սուրբ Գրոց ընթերցումները մեր մտածումները սեւեռում են Սուրբ Խաչի խորհուրդին:

Խաչի մասին բազում են անդրադարձումները սուրբգրային տնտեսության մեջ: Բայց այսօր ցանկանում եմ առանձնացնել դրանցից երկուսը: Երկու արտահայտություն, որոնք լիարժեք եւ բնութագրական կերպով արտահայտում են խաչի խորհուրդը մեր քրիստոնեական ընկալումներում եւ մտածողության մեջ:

Առաջինը, որ ամփոփված է Մատթեոս Ավետարանում, ուղղակիորեն արտահայտված է, Քրիստոսի կողմից, երբ Փրկիչ դիմելով Իր աշակերտներին՝ կոչելով. «...եւ առցէ զխաչ իւր եւ եկեսցէ զկնի իմ» (Մատթ. ԺԶ. 24): Ընդհանուր շարակարգը հետեւյալն է. Քրիստոս, դիմելով Իր աշակերտներին, ասում է. «Ով ցանկանում է Ինձ հետեւորդ լինել, ով ցանկանում է Իմ հետեւից ընթանալ, անհրաժեշտ է, որ ուրանա իր անձը, վերցնի իր խաչը եւ հետեւի ինձ»:

Երկրորդ հատվածը եւս Սուրբ Գրքից է, այս անգամ արդեն Պողոս առաքյալի շուրթերից մեզ փոխանցված. «Այլ ինձ քաւ լիցի պարծիլ, բայց ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (Գաղ. Զ. 14):

Ահա երկու հատվածներ՝ մեկը Քրիստոսի շուրթերով փոխանցված մեզ, մյուսը՝ Պողոս առաքյալի: Մեկում Քրիստոս պատգամում է վերցնել խաչը, հետեւել Իրեն, մյուսում՝ Պողոս առաքյալը դիմում է հավատացյալներին՝ ասելով, որ իր միակ պարծանքը, միակ հպարտությունը Տիրոջ խաչն է: Առաջին հայացքից, երբ խորամուխ չենք լինում պատգամների բովանդակության եւ տիրին ծալքերի մեջ, կարծես թե իրարամերժ, տարբեր խաչերի մասին է խոսքը: Մեկում խաչը ներկայացված է որպես տառապանք, չարչարանք

եւ զոհողություն, իսկ Պողոս առաքյալի վկայությամբ՝ խաչը ներկայանում է իբրեւ հաղթանակի, պարծանքի առարկա: Եւ եթե անգամ իբրեւ պատապանք էլ է ներկայացվում, ապա այնպիսի մի պատապանք, որի վախճանը, հաղթանակի դափնեպսակն է: Սրանք, վստահաբար, միմյանց լրացնող, միմյանց ամբողջացնող արտահայտություններ են:

Խաչը բավականին երկար ճանապարհ է անցել իր ընկալումների մեջ: Մենք բոլորս քաջ գիտենք, որ խաչը նախաքրիստոնեական շրջանում դատապարտության գործիք էր, գիտենք, որ թե՛ միջնադարում եւ թե՛ քրիստոնեությունից առաջ մարդկության մտածողությունը չափազանց ստեղծագործական է եղել, դժբախտաբար, մարդկանց համար չարչարանքի եւ մահվան գործիքներ հորինելու գործում: Ողջ միջնադարը կարծեք մարդկանց համար չարչարանքի, պատապանքի գործիքներ ստեղծելու մի պատմություն է: Ահա խաչը Հռոմեական կայսրության շրջանին մի գործիք էր, որը առանձնացվել էր ոչ միայն մահվան դատապարտելու համար, այլ հատկապես նվաստացման, արհամարհանքի եւ արգահատանքի առաջ բերելու, որովհետեւ հռոմեացի քաղաքացիները բոլորովին այլ ճանապարհով էին մահվան մատնվում՝ երբեմն թունավորումով, երբեմն գլխատմամբ. մինչդեռ խաչելությունը վերապահված էր բացառաբար նրանց համար, ովքեր որ պետք է ստանային հասարակության արգահատանքի, արհամարհանքի միտումի վկայությունները: Ահա Քրիստոս այդպիսի խաչելության մատնվեց: Ուրեմն՝ խաչը նախաքրիստոնեական շրջանում գալիս էր վկայելու, մատնանշելու արհամարհված, նվաստացման ճանապարհով մահվան մատնված մարդկանց պատապանքը. պատապանք, որը ոչնչով ո՛չ պարծանքի, ո՛չ էլ գնահատանքի չէր կարող արժանանալ:

Եւ ահա, Քրիստոս եկավ, եւ մարդիկ սկսեցին հետեւել Նրան՝ վերցնելով իրենց խաչը, Նա փոխեց խաչի իմաստն ու բովանդակությունը: Նա պատգամեց՝ «վերցրե՛ք ձեր խաչը»՝ խաչը դարձնելով պատապանքի խորհրդանիշ, որն իր մեջ արտացոլելու էր գիտակից զոհողության եւ պատրաստակամությամբ պատապանքի խորհուրդը: Հաճախ մարդիկ, որոնք իրենց քրիստոնյա են համարում, սխալ են ընկալում քրիստոնեության խաչակրության եւ պատապանք կրելու իրողությունը: Ոմանք մտածում են, որ որքան արտահայտիչ լինի պատապանքի ցուցադրումը, այնքան ավելի մեծ կլինի հավանականությունը, որ մարդիկ քեզ իբրեւ քրիստոնյա պիտի ընկալեն: Բայց քա՛վ լիցի, քրիստոնեությունը երբեք ու երբեք պատապանքը պաշտամունք չի դարձրել: Տառապանքը քրիստոնեության համար դարձել է ընդամենը գիտակցական մի միջոց, հարազատների, մտերիմների նկատմամբ իրենց սերը արտահայտելու եւ անձնազոհությունն արտահայտելու: Այդպիսին է այն մայրը, որն անձնազոհաբար կրում է իր զավակի պատապանքը հիվանդության ժամանակ կամ մանկության տարիներին՝ խնամք եւ զոհողություն դրսեւորելով իր արարքների մեջ: Այդպիսին է զինվորը, որը պաշտպանում է իր հողը՝ կյանքը զոհելով հայրենիքի համար: Ահա այս պատապանքն է, որ Քրիստոս նկատի ունի եւ քրիստոնյային հորդորում է կրելու այդ խաչը: Բայց այն պատապանքը, որն ի ցույց մարդկանց սեփական բացառիկությունն ընդգծելու տրամադրությամբ եւ մտայնությամբ է արտացոլվում, որեւէ ձեւով, որեւէ կերպ առնչություն չունի քրիստոնեության հետ:

Հիմա անդրադառնանք Պողոս առաքյալի խոսքերին, որ խաչը որպես պարծանքի, հպարտության ազդակ է ներկայացնում հավատացյալների համար: Ուրեմն՝ խաչը դար-

ձավ ժամանակի մեջ այն կամուրջը, որտեղից պառապանքը հաղթահարելով վերածվեց հաղթանակի: Եթե մինչեւ Քրիստոսի խաչելությունը մենք խաչի՝ որպես ընդամենը պառապանքի խորհրդանիշի մասին կարող ենք խոսել, ապա Քրիստոսի Հարությունից հետո խաչը գերազանցապես դարձավ հաղթանակի, հպարտության եւ պարծանքի առարկա: Որեւէ մեկը դժվար հորդորի իր հետեւորդներին, թե պետք է հպարտանալ պառապանքներով, ընկրկումներով, ընկճվածությամբ, փխրությամբ: Պողոս առաքյալն իր հորդորն ուղղեց մեզ՝ հպարտանալու այնպիսի պառապանքով, զոհողությամբ, որի վերջնահանգրվանը, արդյունքը հաղթական Հարությունն է: Եւ, ահավասիկ, Հարության ժառանգորդներն ենք մենք այսօր Սուրբ Խաչի այս փոնակատարության մեջ, Հարության ժառանգորդն ու խաչակիրն է եղել մեր Եկեղեցին իր ողջ պատմության ընթացքին, եւ այդ խաչակրությունը, այդ հաղթանակի փոնահանդեսը մինչեւ այսօր շարունակվում եւ շարունակվելու է նաեւ ապագային. այս մտածումով, վստահությամբ եւ այս առաքելության գիտակցաբար ստանձնումով է, որ մեր Եկեղեցին՝ գլխավորությամբ Նորին Սուրբ Օծություն Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի, հաջորդ շաբաթ՝ սեպտեմբեր 24-27-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գումարելու է Եպիսկոպոսաց ժողով, որին մասնակցելու են ինչպես Ամենայն Հայոց Կաթողիկոսության եպիսկոպոսաց դասը, այնպես եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության եպիսկոպոսները: Ժողովի նպատակն է լինելու քննության առնել մեր Եկեղեցուն այսօր հուզող խնդիրները, մտահոգությունները, հարցադրումները, որոնք հուզում են ինչպես մեզ՝ եկեղեցականներիս, այնպես եւ մեր բոլոր հավատացյալներին, որոնք ազդակ են դառնալու մեր Եկեղեցու պայծառացման, լուսավորության եւ առաքելության արդյունավորմանը եւ այն պարծանքի իրացմանը, որին մեզ կոչում էր Պողոս առաքյալը:

Այս առաքելության մեջ նաեւ մեր Եկեղեցին մշտապես իր սերը, նվիրվածությունը, ծառայությունն արտահայտել է համայն հայ ժողովրդի հանդեպ: Այսօր, երբ մեր ժողովուրդը հուզումներով լի կյանք է ապրում ինչպես հայրենիքում, այնպես եւ Սփյուռքում, ես առավելաբար ցանկանում եմ այդ խաչի զորության հովանավորությունը հայցել Մերձավոր Արեւելքի մեր եղբայրների եւ քույրերի համար, հատկապես Սիրիայի, Լիբանանի, որոնց ներկայացուցիչներից շատերը ահա այսօր կանգնած են մեր Սուրբ Խորանի առջեւ:

Թո՛ղ Աստված օրհնություն, զորություն եւ հովանավորություն պարգեւի մեր բոլոր քույրերին եւ եղբայրներին, ովքեր բնակություն են հաստատում Մերձավոր Արեւելքում եւ կրում են դառը, վշտալի պատերազմի զրկանքներն ու հետեւանքները:

Թո՛ղ Աստված բոլոր նեղյալներին, բոլոր կարոտյալներին Իր ամենահաս Աջով օգնության հասնի, շնորհի բազում-բազում բարիքներ:

Թո՛ղ Խաչը ապավեն եւ պահապան լինի Սուրբ Խաչի փոնակատարության շնորհների մեջ այժմ եւ հավիտյանս հավիտենից. ամեն: